ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 փետրվարի 2025 թվականի № 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի № 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի № 1392-Ն որոշման № 3 հավելվածի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2003 թվականի հունվարի 16-ի *«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելու մասին»* № 2 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ֆանտանի միջնակարգ դպրոց», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Նուռնուսի միջնականգ դպրոց», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ողջաբերդի միջնակարգ դպրոց», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Չարենցավանի № 2 հիմնական դպրոց», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բջնիի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ձրառատի միջնակարգ դպրոց», Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Արագյուղի «Տիգրանակերտ կրթարան» միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №№ 1-7 հավելվածների:

2. Հաստատել կազմակերպությունների կանոնադրությունները՝ նոր խմբագրությամբ:

3. Հանձնարարել կազմակերպությանների տնօրեններին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրությանների մեջ կատարած փոփոխությունները գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 7
ք. Հրազդան